

ՀԱԿՈՐ ՓԱՓԱԶՅԱՆ

ԶՐԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՎԱՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ
ԵՎ ՇԱՀ ՍԱՖԻԻ 1638 Թ. ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Միջնադարյան Հայաստանի հողատիրության պատմությունը սերտորեն աղերսվում է նույն ժամանակաշրջանի ջրատիրության իրավունքի հետ:

Թեև հողատիրության տարրեր ձևերի հետ միասին, քիչ թե շատ հետազոտված է նաև ջրատիրության հարցը¹, սակայն դեռևս լիովին չեն ճշգրտված ջրի նկատմամբ ֆեոդալական սեփականության հիմնական ձևերը:

Հայկական սկզբնաղբյուրներին զուգահեռ XVI—XVIII դդ. պարսկերեն կալվածագրերը մեծ չափով նպաստում են պարզաբանելու ջրի սեփականության իրավունքի հետ առնչվող բազմաթիվ հարցեր: Այդ վավերագրերը առաջին հերթին գալիս են հաստատելու այն իրողությունը, որ թեև կալվածագրերում հատկապես նշվում էր, որ գյուղատիրոջ կամ մալիքի սեփականատիրական իրավունքը տարածվում էր գյուղի սահմաններում գտնվող բոլոր հանդերի, լեռների, դաշտերի, գետերի, ջրերի ու ջրանցքների և այլնի վրա, սակայն քիչ դեպքերում էր, որ գյուղատիրոջ հանդես էր գալիս նաև որպես իր մուլքը հանդիսացող գյուղի հանդերը ոռոգող ջրանցքների ու առուների իրավական սեփականատեր:

Գյուղատիրոջ ֆեոդալական սեփականատիրությունը իր մուլքը հանդիսացող գյուղի սահմաններում գտնվող բոլոր հարստությունների, այդ թվում նաև ջրային ռեսուրսների՝ գետերի, լճերի, ջրհորների և այլնի վրա հաստատվում էր միայն դրանց օգտագործողներից որոշյալ բանակի ռենտա զանձելու իրավունքով: Փաստորեն ջրերի նկատմամբ ֆեոդալական սեփականության իրավունքը խնդրո առարկա ժամանակաշրջանում արտահայտվում էր սովորական հողերի համեմատությամբ ջրարքի հողերից կրկնակի ռենտա զանձելու պրակտիկայով²: Սակայն դա սոսկ ֆեոդալական սեփականության իրավունքն էր միայն, որից անկախ ոռոգման սխեմանում գործում էին սեփականատիրության շատ ավելի որոշակի սկզբունքներ:

¹ Թադ. Ավդալբեկյան, Բահրան և մուլքը 17—18-րդ դարերում (Հայագիտական հետազոտություններ), Երևան, 1969, էջ 426, 429, Ս. Պողոսյան, Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում 17—18-րդ դդ. և էջմիածինը որպես խոշոր հողատեր, «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ» հ. 13, Երևան, 1940, էջ 177—179; Б. М. Арутюнян, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1947, стр. 41—46, Ս. Մառխաչյան, Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում, Երևան, 1959, էջ 130—145:

² А. Д. Паназян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII вв., Ереван, 1972, стр. 182—287.

Աղբյուրները միաբերան վկայում են, որ ջրի սեփականատիրության իրավունքը մեծ մասամբ վերապահված է եղել այն անձնավորությանը, որի նախաձեռնությամբ և միջոցներով ու ջանքերով հանվել է տվյալ ջրանցքը: 1722 թ. մի կալվածագրում, քսս. որի, Օշական գյուղի համայնքը էջմիածնին է վաճառում գյուղի առվի $\frac{1}{3}$ մասը, քնդգծված է, որ «հիշյալ առվի վրա կատարված աշխատանքի և ծախքի իրավունքը պատկանում է նույն գյուղի ռայաթներին»³: Դա նշանակում էր, որ այդ ջրանցքի համայնքային սեփականությունը պայմանավորված էր այն բանով, որ այն կառուցված էր ռայաթների սեփական միջոցներով և համատեղ աշխատանքով:

Նույն սկզբունքով որևէ ջրանցք կարող էր պատկանել մասնավոր անհատի կամ կալվածատիրոջ, եթե վերջինս ծախսելով որոշ գումար նոր առու էր հանել տալիս: Այս մասին ես աղբյուրներում բազմաթիվ վկայություններ կան:

Այսպես օրինակ, պահպանվել է Փիլիպպոս կաթողիկոսի (1633—1655) Շահ Աբբաս II-ին ներկայացրած 1650 թ. խնդրագիրը, որտեղ այլ հարցերի շարքին զեկուցված է նաև, որ մեծ ծախսերի գնով նրան հաջողվել է Արագածի հյուսիսային լանջերից դեպի արևմուտք հոսող ջրերի հունը փոխել և բերել խառնել Քասախ գետին: Շնորհիվ դրա, ավելացել են ոռոգման հնարավորությունները, քնդարձակվել է շրջակա գյուղերի ցանքատարածությունը և բարձրացել բերքատվությունը⁴:

Խոսելով այս խնդրագրի մասին, Սիմեոն կաթողիկոս Երևանցին հիշում է նույն թվականին շահ Աբբաս II-ին ներկայացված մի այլ խնդրագիր, որով Փիլիպպոս կաթողիկոսը ավելի մանրամասն զեկուցել է շահին, բողոքելով շրջակա գյուղերի բնակիչներից, որոնք չեն ուզում ճանաչել վանքի իրավունքները այդ ջրերի նկատմամբ: Շահն այս խնդրագրի վրա տվել է իր հրամանը, կարգադրելով, որ գետի ամբողջ ջուրը բաժանվի երկու հավասար մասերի, կեսը վանքին և մյուս կեսը՝ մերձակա այն գյուղերին, որոնց սահմաններով անցնում է գետը⁵:

Խնդրագրում Փիլիպպոս կաթողիկոսի բերած ջրի քանակը մոտավորապես նշված է 6—7 ջրաղացի ջրի չափ, սակայն Սիմեոն Երևանցին միշտ շեշտում է «որ է ինն ջրաղացի ջուր»: Կարևորը սակայն այն է, որ շահը, ելնելով քննադատական օրենքներից, հաստատել է ջրի ակունքներից հանվող առուների վրա թափված

3 Մատենադարան, Կաթողիկոսական գիման, թղթ. 1 գ, վավ. 289, حق السعی و اعانتی

نیر مزبور تعلق برعایای قریه مزبوره دارد

4 «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 1, Հրովարտականներ», պրակ երկրորդ, կադմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1959, վավ. 39:

5 Սիմեոն Երևանցի, Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 191—192, 213: Փիլիպպոս կաթողիկոսի այս խնդրագրին և շահի հրամանագրին Սիմեոն Երևանցին անդրադարձել է մի քանի անգամ, միշտ շեշտելով Քասախ գետի ջրերի նկատմամբ էջմիածնի ունեցած սեփականատիրական իրավունքները: Ըվ բանի որ այս հույժ կարևոր փաստաթուղթը ինչ-որ պատճառներով անհետացած է եղել վանքի գիմանից, նա անհրաժեշտ է համարել մանրամասն պատմել այդ մասին, նկարագրելով նաև ջրի բաժանման արարողությունը և ավելացնելով, որ «այս կանոն յայնմ օրէ տարածեալ հոշակի յերկրոջս Երևանու և արձանանայ յամենեսին ի հայս և ի տաճիկս, և է այսպէս մինչև ցայսօր մինչ զի՝ եթէ կանանց և մանկանց երկրիս ևս հարցանիցես զօրպիսութիւնէ ջրոյս այսմիկ, պատասխանեն թէ՛ կէտն էջմիածնի է և կէտն երկրիս: Բայց շահաւոր և օգտակար ռազմաւ այս զոր զրէ Շահապասն, որպէս ասացաք, ոչ գիտեմ առ խանն մնայ և ոչ տան Աթոռոյս, և այնպէս անհետանայ, թէ յԱթոռոջս կորնչի: Զի մեք ոչ տեսաք, թէպէտ շատ որոնեցաք և խնդրեցաք» (նույն տեղում, էջ 192):

աշխատանքից ու կատարված ծախսերից բխող սեփականության իրավունքը: Բայց և այնպես, քանի որ գետը միշտ էլ հոսել է այդ գյուղերի սահմաններով և նրա ջրերից գյուղացիները օգտվել են իրենց հանած առուներով, ուստի ճշգրտված է միայն օգտագործվելիք ջրերի քանակը:

Թե որքան կայուն էին հիշյալ ջրերի նկատմամբ հաստատված էջմիածնի վանքի սեփականատիրական իրավունքները, կարելի է եզրակացնել այն փաստից, որ դրանք հետագայում ևս խստորեն պաշտպանվել են թե՛ տեղական խաների և թե՛ թուրք իշխողների կողմից: XVIII դարի 20-ական թվականներին, երբ նորից մոտակա գյուղերի ռայաթները փորձել են անտեսել էջմիածնի իրավունքները, Երևանի Ռաջաբ փաշան ցանկանալով ընթացք տալ էջմիածնի բողոքին, դիմել է Շարիին, որը հիմնվելով շահ Աբրահամ II-ի հիշյալ հրամանագրի վրա, նորից հաստատել է, որ ջրի կեսն է միայն պատկանում գյուղերին, իսկ մյուս կեսը՝ վանքի սեփականությանն է. «Հիշյալ ջրանցքի ամբողջ ջուրը կիսվեց, կեսը տրվեց վանքին, իսկ մյուս կեսը՝ հիշյալ 20 գյուղերին և վեճը հարթվեց», — ասված է Շարի որոշման մեջ⁶, որը հաստատված է Ռաջաբ փաշայի հետևյալ մակագրությամբ. «Թող վարվեն ըստ Շարի որոշման և այսուհետ հիշյալ ջուրը օգտագործեն միայն կես առ կես, ոչ ավել լինի, ոչ պակաս»⁷:

Այն մասին, որ այս որոշումը առանձին երևույթ չէր և բխում էր հնուց անտի հաստատված օրենքներից, կարելի է եզրակացնել թեկուզ այն փաստից, որ 1732 թ., երբ մշեցի կամ խոշարեցի Աբրահամ կաթողիկոսը Մեծամորի վերին հոսանքներից փորձում է մի նոր առու հանել, տեղական Շարի ատյանն ու թուրքական իշխանությունները, լսելով գյուղացիների բողոքը, որոշում են, որ այդ նոր առվի ջրի կեսը պետք է պատկանի էջմիածնին, իսկ մյուս կեսը՝ այն գյուղերին, որոնցով անցնելու է առուն⁸:

Ֆեոդալական հողատիրության տարրեր ձևերի առկայության պայմաններում, անձնական միջոցներով առուներ հանելու, ջրի նոր աղբյուրներ հայտնաբերելու կամ հորատման ու քանքանների միջոցով ստորերկրյա ջրերից նոր քահրիզներ բանալու և այլպիսիք որպես սեփականություն օտարելու մասին բավական ուշադրավ փաստաթղթեր են սրահպանվել: Դրանք առավելապես վերաբերում են XVI—XVIII դարերին և հետաքրքիր են հատկապես ջրի մեծ

6. Մատենադարան, կթղկ. դիման, թղթ. 1 գ. վավ. 304. حرق مزبور ك صوبى جمله معرقتيله تنصيف اولنوب نصفى اوج كليسايه و نصفى اخرى يگرمى ياره قريهيه ويزيلوب نزاعلرى قطع اولندى

7. Նույն տեղում. «اعلام شرعيه سى موجبنجه عمل اولنوب بعد اليوم ما مزبورى مناصفه اوزره استسقا ايدوب زياده و نقصان ايتدرلميه ديو

8. Նույն տեղում, թղթ. 1 գ. վավ. 339, 340, հմմտ. Չամբո, էջ 200. «...և շարն վճալ թէ ջուրդ այդ որքան և կայցէ՝ երկու բաժին լիցի, մին բաժինն քերտղին և միւսն այնց գեօղորէիցն՝ ընդ որովք անցանէ առուն և չուրդ այդ»: Ուշադրավ է այս տեսակետից այն փաստը, որ Մխիթար Դոշի Դատաստանագրքի տարրեր խմբագրություններում հանդիպում ենք երկու հակադիր հոգվածների: Մի գեղարում՝ «գետը յորոց հոսին սահմանաց ոչ է, բայց առ որ հասանեն», իսկ մյուս գեղարում՝ «գետը ուստի ակն ելանէ նոցա է և ոչ առ ուր հասանեն» (Մխիթարայ Դոշի Դատաստանագրքը հայոց, Վահան ծ. վարդապետ Բաւտամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 327): Դժվար չէ նկատել, որ XVII դարին վերաբերող վերահիշյալ երկու գեղարում էլ ջրի սեփականության իրավունքը բաժանված է ակունքի տիրոջ կամ առուն հանողի և առվի ճանապարհին գտնվող գյուղերի միջև:

ու փոքր շափերով վաճառքի և օգտագործման սկզբունքների ու եղանակների մասին տվյալներով:

Յարդ կատարված ուսումնասիրությունները գեոևս հնարավորություն չեն տալիս որոշակի գաղափար կազմելու ջրաշափման բնդհանուր սկզբունքների վերաբերյալ, որքանով որ դրանք բառ տեղի և ժամանակի բավական տարբեր են եղել: Դրանով հանդերձ մեր ձեռքի տակ եղած նյութերը թույլ են տալիս ասելու, որ ջրաշափումը կատարվել է և՛ բառ ժամալի և՛ բառ ժամանակի կամ հոսքի տևողությամբ:

Ջրի շափի միավորները նույնպես առանձին ջրշաններում տարբեր են եղել: Ջրի սեփականության տարբեր շափերի մասին որոշակի տեղեկություններ են տալիս հատկապես այն վավերագրերը, որոնք վերաբերում են այս կամ այն սեփականատիրոջ, որեւէ առվի կամ ջրանցքի ջրի մի մասի նկատմամբ ունեցած սեփականատիրական իրավունքին: Այդպիսին է, օրինակ, Փիլիսոփոս կաթողիկոսի վերոհիշյալ խնդրագրի առնչությամբ տրված շահ Աբրահա II-ի հրովարտակը, որով հաստատված են էջմիածնի իրավունքները Քասախ գետի ջրերի կես մասի նկատմամբ: Նույնպիսի սեփականության օտարման մասին է խոսում նաև 1722 թ. մեղ արդեն ծանոթ կալվածագիրը, բառ որի, Օշականի համայնքը իր առվի $\frac{1}{3}$ մասը վաճառում է էջմիածնին:

Նման գեպերում մենք գործ ունենք մի ամբողջական միավորի որոշյալ մասի նկատմամբ ունեցած սեփականատիրական իրավունքի հետ: Տվյալ գետի կամ ջրանցքի ջրի առատանալու կամ նվազելու հետ միատեղ ավելանում կամ պակասում էր յուրաքանչյուր բաժնետիրոջ բաժինը, որը իրավական փաստաթղթերում, կալվածագրերում և հրովարտակներում պարսկերեն անվանվում էր «սահմ - سهم» (բաժին):

Շահ Քահմազ I-ի Մակվի Քաղեոս առաքյալի վանքին տված հիշրեթի 969 (1562) թ. հրովարտակում նշված է, որ «Ղարաքիլիսայի հանդին Աբրահայուն գյուղի գետի վեց բաժնից երեք բաժին ջրի իրավունք է տրված»⁹ Ինչպես սույն փաստաթղթում, այնպես նաև ամենուրեք պարսկալեզու վավերագրերում և դրականության մեջ որեւէ ջրից ոռոգման նպատակով օգտվելու իրավունքը, որ պարսկերեն բառացի կոչվում էր «ջրի իրավունք» («حق آب» - հակկարե») դիտվել է որպես սեփականություն կամ «մուլք» և որպես այդպիսին ժառանգվել է սերնդից սերունդ կամ ենթարկվել տարբեր կարգի օտարման¹⁰:

Ջրի սեփականության տարբեր ձևերի և կատեգորիաների մասին բավական արժեքավոր տեղեկություններ է տալիս Սիմեոն Երևանցին «Ջամբուի» 18-րդ գլխում, նպատակ ունենալով ծանոթացնել իր հետնորդներին վանքի ջրատիրական կարողությունների հետ: Այստեղ նա մանրամասն անդրադառնում է նաև Փիլիսոփոս կաթողիկոսի վերոհիշյալ ձեռնարկումներին և ապա Օշականի, ինչպես նաև Երևանի Դավթայի առվին և այլ կառուցած, գնած կամ վակֆ ստացած ջրանցքների ու ջրամբարների, ճշտելով նաև այդ ջրերի բանակն ու ոռոգման հնարավորությունները:

Այստեղ գծվար չէ նկատել, որ մեծաքանակ ջրերի շափի միավորը մեկ ջրաղացին բավարարելու շափով հոսող ջուրն էր: Այդպես էր հաշվված, օրի-

⁹ «Հրովարտակներ», I, վավ. 16 (قرأ کلیمه) از حق آبد مزرعه مذکور

روند خانه ارکوبین از شش سهم سه سهم مقرر است

¹⁰ Տե՛ս «Կալվածագրեր», կազմեց Հար. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 109—125:

նակ, Փիլիպպոս կաթողիկոսի բերած ջուրը, որ պարսկերեն վավերագրերում նշված է 6—7, իսկ «Ջամբուում» մինչև 9 ջրաղացի ջրի շափ:

Ինչպես «Ջամբուում», այնպես նաև հայերեն ու պարսկերեն դիվանական վավերագրերում ավելի հաճախ հանդիպում է բահով հաշվվող շափը՝ «մեկ բահ ջուր», «երկու բահ ջուր» և այլն: Դա նշանակում էր, որ հոսող ջրի տրամագիծը հավասար էր բահի բերանի լայնքին: Այս շափը բավական տարածված է եղել ոչ միայն Հայաստանում, այլև Ադրբեջանում և Իրանում¹¹:

Զրաշափման տարածված միավորներից էր նաև «թուխդը», որը փաստորեն յուրաքանչյուր բահի դի ամբողջ ջրի $\frac{1}{4}$ մասն էր: Ուստի մեկ թուխդ ջրի քանակը ամեն մի առանձին դեպքում սերտորեն պայմանավորված էր տվյալ բահի դի ընդհանուր ջրաքանակով¹²:

Ուշագրավ են այս տեսակետից Զաքարիա Աղուլեցու հաղորդած տեղեկությունները, որոնք հիմնականում վերաբերում են աղուլեցի Խոջենց Մեհրաբի որդի Թումանի նախաձեռնությամբ բացված աղբյուրի ջրերին: 1662 թ. հիշատակագրությունների մեջ նա արձանագրում է. «Աղուլիս Սնասեց կհալի (պետք է լինի «կնալ» — Հ. Փ.) լին անունն Գ(3) կհալ կասին. այս կհալիս Բ(2) կհալն քոռացելայ, ջուրն ցամաքել, ահայ աղուլացի այր ոմն անունն Խոջինց Թուման, այս Թումանս այս կհալիս մին կհալն հանեց, մին մատն ջուր եկաւ, ձգեց յուր այգին, որ է թվին ՌՃԺԱ. (1111): Այս Թումանս իւր այգին կհալովն ծախեց սուրբ Թումաչի առաջնորդ Պետրոս վարդապետին»¹³:

Մի այլ տեղ նույն անձնավորության ջանքերով բացված այլ աղբյուրից հոսող ջրերի քանակը նշելիս Աղուլեցին օգտագործում է «լուլա» (խողովակ) տերմինը, խոսքն անշուշտ որոշյալ տրամագծով խողովակի մասին է, որն ընդունված է եղել տվյալ վայրում, որպես ջրաշափման միավոր¹⁴:

Աղբյուրների համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ վերոհիշյալ շափերը վերաբերում են անընդհատ հոսող ջրերին: Այսինքն ջրի տվյալ քանակի հոսքը չէր սահմանափակված նաև ինչ-որ ժամանակով: Հոսքի տեղություններ կամ ժամանակով չափվում էին այն ջրերը, որոնք հատկացված էին որոշակի հողատարածությունների կամ այգիների ոռոգման:

«Ջամբու» նույն դիրքում Միմեոն Երևանցին թվարկում է նաև տարբերակներներից կամ քահրիզներից զանազան ուղիներով ձևաք բերած ոռոգման իրավունքների մասին, որը նա անվանում է «չափաջուր»: Այդ ջրերի քանակը, սակայն, նա չափում է միայն հոսքի տեղություններ՝ օրերով կամ շաբաթներով՝ «մեկ շաբաթէն ջուր», «երկու շաբաթէն ջուր» կամ «13 օրեն մեկ, մեկ ատուր ջուր» և այլն: Այդ նշանակում էր, որ տվյալ աղբյուրի կամ քահրիզի ջուրը, որքան որ կար, մեկ շաբաթ, երկու շաբաթ կամ 13 օրը մեկ, լրիվ 24 ժամ պետք է հոսեր դեպի վանքապատկան հանդերն ու այգիները: Թեև չէր բացառվում նաև այդ իրավունքի ժամանակավոր օտարումը այլ հողատիրոջնեի ու այգեատերերի, մանավանդ, որ դրանք մեծ մասամբ վերաբերում են Թավրիզում, տարբեր առիթներով վակֆ ստացած ջրերին: Այս ջրերը սովորաբար

11 «Ջամբու», էջ 154, 212, հմմտ. «Հրովարտական», 11, վավ. 11, 26. տե՛ս նաև սույն հոդվածին աղբյուրներ հրապարակվող շահ Մաֆիի հրովարտակը:

12 «Կալվածագրեր», կազմեց Հար. Արքահամյան, Երևան, 1941, վավ. 9:

13 Զաքարիա Աղուլեցի, Պրագրություն, Երևան, 1938, էջ 140—141:

14 Նույն տեղում, էջ 140:

հաշվվում էին շաբաթով, որը ժողովրդական լեզվով, աղբրեջաններն կոչվում էր «հավթադի»¹⁵:

Սակայն ոռոգման իրավունքը հայերեն վավերագրերում ավելի հաճախ չափվում է «գլխով»: Արձանագրելով, որ այսինչ քահրիզից մեկ, երկու, չորս կամ ավելի գլուխ ջուր պատկանում է որևէ անհատ սեփականատիրոջ կամ կրոնական հաստատության, միաժամանակ անպայման նշվում էր, թե շաբաթվա որ օրերին է տեղի ունենալու ոռոգումը¹⁶: Սա, իհարկե, նույնպես կարելի է դիտել որպես ջրաշափման այնպիսի ձև, որի հիմքում ընկած է հոսքի տեղությունների որոշակի ժամանակով սահմանափակման սկզբունքը: Այստեղ նույնպես ուշադրավ է այն փաստը, որ այս ձևով չափվող ջրի օգտագործման իրավունքը ևս դիտվել է որպես սեփականություն և ենթարկվել տարբեր կարգի օտարման¹⁷:

Աղբյուրներից հոսող որոշակի տրամաշափով ջրերի կամ «կանաթների» (کنداق) ժամով կատարվող հաշվարկը առավելապես կիրառվում էր պաղատու, ինչպես նաև խաղողի այգիների ու բանջարանոցների ոռոգման ժամանակ:

Հիշերեթի 1090 (1679) թ. Օրդուբադի Շարի ատյանում կազմված մի բնդարձակ կալվածագրում մանրամասն խոսվում է այն մասին, որ վերոհիշյալ Խոջենց Մեհրաբի որդի Թումանը ունեցել է, անձնական միջոցներով հանած, մի այլ աղբյուր (կանաթ), որի ջրի բնդհանուր քանակը հաշվվում էր 80 ժամ: Այդ ջրով նա ոռոգում էր իր խաղողի և այլ պտղատու այգիները: Սկսած հիշերեթի 1082 (1671) թվականից, նա այդ այգիների մեծ մասը համապատասխան քանակի ջրով մաս առ մաս վաճառում է նախ ոմն ազուլեցի Կարախանի որդի Իսմիրխանին, որն իր հերթին վերստին վաճառում է Խասե-յի շարիֆի դուլամ, հետագայում Ազուլիսի Քալանթար Իսախան-բեկի որդի Մուսա-բեկին: Վերջինս Թումանից գնում է ևս երկու տախտակ խաղողի այգի 24 ժամ ջրով, և այսպիսով, քստ կալվածագրի վերջում կատարված հաշվարկի, հիշյալ 80 ժամ ջրի 62 ժամը, համապատասխան տարածությամբ այգիներով դառնում է Մուսա-բեկի սեփականությունը¹⁸:

Վերոհիշյալներով, իհարկե, չեն սահմանափակվում ջրի սեփականատիրության ձևերն ու օգտագործման ու բաշխման ժամանակ կիրառվող ջրաշափման սկզբունքները: Սույն համառոտ ակնարկով մենք փորձեցինք միայն վավերագրական սկզբնաղբյուրների բնդհանուր նյութերի հիման վրա թուցիկ կերպով ծանոթանալ XVI—XVIII դդ. ջրի սեփականության իրավական հիմունքներին և ջրաշափման ու օգտագործման առավել տարածված մի քանի ձևերի հետ:

Կատարված հսկանքիկ հետազոտությունը, սակայն, դալիս է մի անգամ ևս հաստատելու այն իրողությունը, որ պատմողական սկզբնաղբյուրներին դուգահեռ դիվանական փաստաթղթերը, իսկ առավել ևս պարսկերեն պաշտոնական վավերագրերը հսկայական փաստական նյութեր են պարունակում, որոնց ավելի հանգամանալից ու ամբողջական հետազոտությունը մեծ չափով կարող է նպաստել ֆեոդալական հողատիրության կարևոր խնդիրներից մեկի՝

15 «Կալվածագրեր», կազմեց Հար. Աբրահամյան, Երևան, 1941, վավ. 96:

16 Նույն տեղում, վավ. 86, 87, 88, 89, 91, 92, 93:

17 Նույն տեղում:

18 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 171:

չրատիրության պատմության առավել լիակատար և համակողմանի ուսումնասիրությանը:

* * *

Ձեռնարկելով Մատենադարանի կաթողիկոսական դիվանի պարսկերեն վավերագրերի մատենաշարային հրատարակությանը, բնագրագիտական աշխատանքների ընթացքում հաճախ առիթ ենք ունեցել անդրադառնալու նաև որոշ հայագետների անցյալում այս բնագավառում կատարած աշխատանքներին, ընդգծելով, հատկապես, այդ ուսումնասիրությունների շնորհիվ տարբեր մշակութային կենտրոններում կամ եկեղեցական հաստատություններում պահպանված պարսկերեն վավերագրերի մասին մեզ հասած տեղեկությունների նշանակությունը¹⁹:

Որքան ավելի ենք ծանոթանում նախահեղափոխական շրջանի հայագիտական գրականությանը, այնքան ավելի համոզվում ենք, որ Հայաստանի մեծ ու փոքր վանքերի դիվանական վավերագրերի ոչ մեծ մասն է մեզ հասել: Էլ չենք խոսում առանձին արևելահայ ազնվական ընտանիքների իրավունքներին վերաբերող դիվանական նյութերի մասին, որոնցից նույնպես հատուկ ենթ վավերագրեր են պահպանվել:

Նախասովետական ուսումնասիրողների մեծ մասը չի տիրապետել պարսկերենին և վավերագրերից օգտվել է միայն թարգմանչի միջնորդությամբ, նպատակ ունենալով սոսկ վերահասու լինել բովանդակությանն ու օգտագործել դրանք իրենց հետաքրքրող հարցերի լուսաբանման համար:

Ոմանք, սակայն, փորձել են տալ նաև իրենց ձեռքն անցած վավերագրերի թարգմանությունները: Այս բնագավառում առավել մեծ երախտիք ունեն Ս. Զալալյանցն ու Մ. Սմբատյանցը, որոնց կատարած աշխատանքներին, ինչպես արդեն ասվեց, հաճախ առիթ ենք ունեցել անդրադառնալու: Նշենք միայն, որ օտար, մեծ մասամբ ոչ այնքան գրագետ պարսկագետների միջնորդությամբ կատարված այդ հայերեն «թարգմանությունները» զգալի չափով հեռացած լինելով բնագրերից, չեն կարող բավարարել ներկայիս բնագրագիտության և աղբյուրագիտության պահանջները:

Բարեբախտաբար պահպանվել ու մեզ են հասել Ս. Զալալյանցի հրատարակած վավերագրերի խնամքով հանված պատճենները, որոնց մի մասը ընդգրկված է «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտական» շարքի արդեն լույս տեսած պրակներում²⁰: Մյուսները ևս ժամանակագրական կարգով, նույն ձևով լույս կտեսնեն: Ավելի բարձր դիժակում են գտնվում Մ. Սմբատյանցի «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի» աշխատության հավելվածում հրատարակված վավերագրերը, որոնց պարսկերեն բնագրերը պահպանվել են ներկայումս Մատենադարանի «Անհատական արխիվների» բաժնում գտնվող «Մելիք-Շահնազարյանների գործում»²¹:

1904 թ. լույս տեսած «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակա և շրջակայից նորա» աշխատության մեջ Մ. Սմբատյանցը հրատարակել է նույն

¹⁹ Տե՛ս «Հրովարտական», I, էջ 12, 17:

²⁰ Տե՛ս «Հրովարտական», I, վավ. 3, 6, 18, 2-րդ 5, 7, 2, 3

²¹ Մատենադարան, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 21, 23, 25, 27, 29, 31, 33, 35, 37, 39, 41, 43, 44, 47, 49, 51, 58, 126, 127:

վանքի դիվանում գտնվող մի բավական արժեքավոր վավերագիր, որի բնագիրը մեզ չի հասել, կամ ավելի ճիշտ, ցարդ մեզ չի հաջողվել գտնել այդ վանքի դիվանի հետքերը, որտեղ կարող է պահպանված լինել նաև հիշյալ վավերագիրը:

Ինչ-որ նկատառումներով, սակայն, Մ. Սմբատյանցը այս վավերագիրը հրատարակելիս ավելի մեծ խնամք է դրսևորել և փորձել է գիտական տեսք տալ այդ հրատարակությանը: Թեև խիստ անհաջող և համարյա անընթեռնելի, փորձ է արված ընթերցողին ներկայացնել վավերագրի լուսանկարը: Այսպես արված է հայատառ պարսկերեն բնագիրը, ազրեջանական արտասանությամբ, նույնպես բավական մեծ աղավաղումներով: Այնուհետև հայերեն և ռուսերեն թարգմանություններն են, ինչպես նաև վավերագիրն ընթերցողի ազրեջաններեն բանավոր թարգմանության գրառումը, որը և հիմք է ծառայել հայերեն և ռուսերեն թարգմանություններին²²:

Լուսանկարի բնագրանուր տեսքը հուշում էր, որ դա Սեֆյան շահերից մեկի հրովարտակն է, կնիքի վրա, թեև աղոտ, նշմարվում էր «Սաֆի» (صفی) անունը: Ինչպես կնիքի, այնպես նաև գրության ձևի ու այլ բնագրական հատկանիշների ուշագիր համեմատությունը շահ Սաֆիի (1629—1642) արդեն լույս տեսած հրովարտակների հետ, այլևս կասկած չէր թողնում ասելու, որ հրովարտակը արված է շահ Սաֆիի կողմից հիջրեթի 1048 (1638) թվականին:

Հայատառ պարսկերեն բնագրի համեմատումը լուսանկարի քիչ թե շատ ընթեռնելի տողերի հետ, ինչպես նաև նման հրովարտակների վերծանության փորձված մեթոդների կիրառումը, նպաստեցին վերացնելու բնագրի բոլոր աղավաղումներն ու վերականգնելու հրովարտակի պարսկերեն ամբողջական բնագիրը:

Շահ Սաֆիի սույն հրովարտակն ազդյութադիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն որպես Երնջակի Ս. Կարապետի վանքից ցարդ մեզ հայտնի միակ պարսկերեն պաշտոնական վավերագիրը, այլ ավելի մեծ է նրա արժեքը՝ որպես ջրի սևիականության, օգտագործման և ջրաշափման վերը շարադրված ձևերի մասին կարևոր տվյալներ պարունակող հավաստի սկզբնաղբյուր:

Ստորև տալիս ենք հրովարտակի վերականգնված պարսկերեն բնագիրն ու հայերեն թարգմանությունը:

هو

الملك لله

[میر شاهی صفی]

فرمان همايون شد آنکه چون درينولا عيسى فرطابيت که در معبد
وانك اسرا ئيل واقعه در الفجق تومان تخرچوان ميباشد بدرگاه جهانپناه
آمده بعرض رسانيد که از قدیم الايام الى الآن معمول است که از قريه
مارالى آريک بيل آب و از قريه ابره قونيس خمس آب بمعبد وانك

²² Մ. Սմբատյանց, Նկարագիր Սուրբ Կարապետի վանքից Երնջակի և շրջակայից նորա, Տիֆլիս, 1904, էջ 476—481:

اسرائیل مزبور جاری می‌شده الحال جمعی بخلاف شرع و حساب مانع می‌شوند و درین باب استند عا حکم اشرف بعهدہ عالیجاه بیگلربیگی چخور سعد و اهالی شرع انور نمود بنابرین مقرر فرمودیم که عالیجاه بیگلربیگی چخور سعد و حاکم آنجا بحضور اهالی شرع انور بحقیقت رسیده هرگاه نموده واقعی بوده باشد مقرر دارند که حصه معینہ آب مزبوره را که از قدیم الایام الی الآن بوانک مزبور جاری می‌شده باشد بدستور معمول قدیم و نهج استمرار سنوات سابقه جاری بوده احدی از مردم آنجا بخلاف حق و حساب مانع و مزاحم نشوند و بمقتضای قانون شرع و حساب عمل نمایند و نوعی باشد که بجماعت مزبور ستمی واقع نشود درین باب قلغن دانسته از فرموده تخلق نورزند

تحریراً فی شهر صفر سنه ۱۰۴۸

Նա է:

Իշխանությունն աստծունն է:

Շահ Սաֆիի կնիքը

Արքայական հրաման եղավ այն մասին, որ օրերս Քուման-ե Նախչևանի Ալնջակում²³ գտնվող Իսրայելի²⁴ աղոթավայրի և վանքի Նսաչի վարդապետը եկավ Աշխարհի ապավենի դուռը և գեկուցեց այն մասին, թե հին ժամանակներից իվեր մինչև օրս ընդունված է եղել, որ Մարտիրոս²⁵ գյուղից մեկ բաճջուր և Ապրակունիս գյուղի ջրի մեկ հինգերորդը հոսի դեպի հիշյալ Իսրայելի վանքն ու աղոթավայրը, իսկ այժմ ոմանք հակառակ Շարի և անիրավ կերպով, արգելք են հանդիսանում: Նա խնդրեց, որ այս մասին Զուխուր-Սադի բեկլարբեկին և Շարի երեւելիներին ուղղված սրբազան հրամանագիր հրապարակվի: Ուստի կարգադրեցինք, որ Զուխուր-Սադի բարձրաստիճան բեկլարբեկին և տեղի հարիմը լուսավոր Շարի երեւելիների ներկայությամբ իրողությունը ստուգի և եթե ներկայացվածը համապատասխանում է իրականության, թող կարգադրեն, որ հիշյալ ջրի որոշյալ բաժինը, որ հին ժամանակներից իվեր առ այսօր հոսել է դեպի հիշյալ վանքը, հնուց ընդունված կարգով և անցած տարիների նման շարունակի հոսել, և տեղի մարդկանցից ոչ ոք ապօրինի և անիրավ արգելք չհանդիսանա ու անհանգստություն չպատճառի: Թող վարվեն Շարի օրենքների և արդարության սկզբունքներով և այնպես լինի, որ հիշյալ համայնքի նկատմամբ անարդարություն տեղի չունենա:

Այս ընդունել սրպես խիստ կարգադրություն և հրամանին չհակառակել:

Գրվեց 1048 թ. սաֆար ամսին (1638 թ. հունիս 14—հուլիս 12):

²³ Երևակ:

²⁴ Երևակի Ս. Կարապետի վանքը տեղի մահմեդականները Իսրայել մարգարեի անունով կոչում էին «Իսրայել փեյղամբար», ինչպես որ Դարաշամրի Ս. Սաեփանոս Նախավկայի կամ Մադարդա վանքը Դանիել մարգարեի անունով կոչվում էր «Դանիալ փեյղամբար»:

²⁵ Գյուղն այժմ անվանվում է Բանանիար:

А. Д. ПАПАЗЯН

АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ О ВОДОВЛАДЕНИИ И УКАЗ ШАХА САФИ ОТ 1638 года

(Р е з ю м е)

История землевладения в средневековой Армении тесно связана с вопросом о водовладении, который, однако, по сей день не стал предметом серьезного научного исследования ввиду недостаточного изучения соответствующих источников и в частности архивных документов, а также отсутствия поныне научных публикаций большей их части.

В статье делается попытка вкратце обрисовать некоторые особенности водовладения, водопользования и водоизмерения в XVI—XVIII вв. и показать роль архивных и, в частности, официальных персидских документов в деле освещения этих вопросов.

В приложении даются также обнаруженный в 1904 г. М. Смбалянцем и восстановленный автором персидский текст указа шаха Сафи от 1638 г., подтверждающего водовладельческие права монастыря св. Карапета в Ерынджаке, и его армянский перевод.

H. D. PAPAZIAN

LES DOCUMENTS D'ARCHIVES CONCERNANT LE DROIT DE PROPRIÉTÉ SUR L'EAU ET LE DÉCRET DE 1638 DE SHAH SAFI

(R é s u m é)

L'histoire de la propriété foncière en Arménie médiévale est étroitement liée au problème du droit de propriété sur l'eau, lequel, cependant, n'a pas fait jusqu'à présent l'objet d'une sérieuse analyse scientifique à cause de l'étude insuffisante des sources correspondantes, particulièrement des documents d'archives, et l'absence de publications scientifiques de la majorité de ces sources.

L'auteur de l'article esquisse brièvement quelques particularités du droit de propriété sur l'eau, du droit d'usage et de mesure de l'eau aux XVI—XVIII siècles et montre le rôle des documents d'archives et particulièrement des documents officiels persans dans l'éclaircissement de ces questions.

L'article comporte en appendice le texte persan, découvert en 1904 par M. Smbatians et reconstitué par l'auteur, du décret de 1638 de Shah Safi, confirmant les droits de propriété sur l'eau du monastère St. Karapet de Yerindjak, et sa traduction arménienne.